ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԷԹՆԻԿ ԿԱԶՄԸ ԵՎ ԷԹՆԻԿ ՊՐՈՑԵՍՆԵՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ 1724—1800 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Մ. Մ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

XVIII դարի առաջին քառորդի վերջին բուն Երևան քաղաքում բացարձակ մեծամասնություն էր կազմում հայ բնակչությունը։ Ըստ Աբրահամ Երևանցու հաղորդման, թուրք զավթիչների կողմից Երևանի պաշարումից անմիջապես առաջ «քրիստոնէքն իւրեանց պատրաստութիւն տեսին. Փարայքար մին գեղ այ. Գոգումբեթ մին գեղ այ, Կայվակերգ մին դեղ այ, Յառինջ, Յավան, Գավան, Զագ, Նորայգեղն, բովայդակ այս գեղերիս մարդն մտել ի քաղաք. այս գեղերուս մարդն կամ քաղաքի մարդն կամ գեղերի մարդն միայորեցան, բօվանդագ եղան ամենեքեան, որ պատվայկան բան այ»[1]։ Բուն քաղաքի և շրջակա գյուղերի հայ բնակչությունը թուրքերի դեմ դուրս էր բերել 9423 մարդուց բաղկացած աշխարհազոր, որը կարողացավ մոտ 3 ամիս դիմադրել թշնամուն[2]։ Զորքերի տեղաբաշխումից կարելի է մոտավոր պատկերացում կազմել քաղաքի թաղամասերում բնակչության տեղաբաշխման մասին։ Համաձայն Աբրահամի վկայության հայկական զորքը ըստ թաղերի բաշխված էր հետևյալ կերպ.

ԲՃԼԴ (234) հոգի-բոշաներ, պահպանում էին «Խ(40) ջաղացի ճանապարն»,

ԳՌ (3000) հոգի-Զորագյուղից, պահպանում էին Ծակ-քար կոչվող վայրը,

[?] հոգի-Կոնդից, պահպանում էին «Դարբախանի ճանապարն»,

ԹՃԾԵ (955) հոգի-Ջուհայրենց թաղից, պահպանում էին «Դարբինոցի ճանապարն»,

ԴՌ (4000) հոգի-Հին Երևանի (Շհար) թաղից։

Ընդամենը 8189 հոգի։ Այս թվի և ընդհանուր զորաքանակի տարբերությունը բացատրվում է նրանով, որ աշխարհազորի մնացած մասը տրամադրել էր քաղաքում ապաստանած գյուղական բնակչությունը։

Այս զորաքանակից բացի, ըստ Աբրահամի, բուն քաղաքում հաշվվում էին ևս «ԻԸՌ (28 000) արայական եւ իգական, որ անպէտ են»[3]։ Այսինքն քաղաքի և այնտեղ ապաստանած շրջակա ութ հայ գյուղերի բնակչությունը միասին կազմում էին մոտ 40 հազար մարդ, որի գրեթե կեսը, ամենայն հավանականությամբ, պետք է կազմեր քաղաքի մշտական բնակչությունը։

Աբրահամ Երևանցու աշխատության մեջ առաջին անգամ տեղեկություններ են հանդիպում Երևանում հայ բնակչության կողքին բնակվող մեկ այլ էթնիկ խմբի՝ արդեն նստակեցության անցած փոքրաթիվ միաբնակ գնչուների (հայ բոշաներ) մասին։ Ըստ վկայության «Կոնտի թաղ կասեն, ուր հարիւր տուն

---

1 Աբրահամ Երեւանցի. Պատմութիւն պատերազմացն 1721—1736 թուի. Յառաջաբան, բնագիր, խմբագիր օրինակ եւ ծանօթութիւններ, պատրաստեց Հ. Ս. Ճեմճէճեան, Վենետիկ, 1977, էջ 28, հմմտ. էջ 102։

2 Երևանի հայ բնակչության հերոսական ինքնապաշտպանության մասին տե՛ս Ա. Միրզոյան. Երևանի 1724 թ. հերոսական պաշտպանությունը թուրքական զավթիչներից.—ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1953, № 3, էջ 89—98, Վ. Մ. Մարտիրոսյան. Անդրկովկասի ժողովուրդների համագործակցությունը և Երևանի 1724 թ. պաշտպանությունը.—«Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 2, էջ 187—191։ Նույնի՝ Հայ և վրաց ժողովուրդների համագործակցությունը ազատագրական պայքարում (XVIII դարի 20-ական թվականներ). Երևան, 1971, էջ 143—150։ Թ. Խ. Հակոբյան. Երևանի պատմությունը (1500—1800 թթ.). Երևան, 1971, էջ 71—95։ Հայ ժողովրդի պատմություն. հ. 4, Երևան, 1972, էջ 156—158։

3 Աբրահամ Երեւանցի, էջ 28։

բոշայ կա, քրիստոն մեծ իշխանք, գանձայ տեր բօշէք»[4], որոնք հայերի կողքին հերոսաբար մասնակցեցին Երևանի ինքնապաշտպանությանը։ Զանդրադառնալով Երևանում նրանց հիմնվելու հարցին, նշենք, որ այս և այլ վկայություններ ցույց են տալիս, որ արդեն XVIII դարում նրանք ոչ միայն նստակյաց էին, այլև մեծ մասամբ (համենայնդեպս՝ դավանապես) հայացած։ Սիմեոն Երևանցին, նկարագրելով Երևանի խանության վանական կալվածատիրության պատկերը XVIII դարի երկրորդ կեսին, որպես Երևանի Անանիա Առաքյալի վանքի վիճակ ներկայացնում է «զԱռինջ և զամենայն Բոշայից ազգն»[5]։ Նույն կաթողիկոսի օրոք, Երեմիա Օշականցի նոտարի ձեռքով կազմված էջմիածնի նվիրակության թեմերի ցուցակում ևս Անանիա Առաքյալի վանքի թեմն ընդգրկում էր «Առինջ. բոլոր բօշայքն»[6]։

Աբրահամ Երևանցու մի հաղորդումից կարելի է եզրակացնել, որ քաղաքում հայ ազգաբնակչության կողքին ապրում էր նաև որոշ թվով մահմեդական բնակչություն։ Քաղաքի ինքնապաշտպանական մարտերի սկզբում Երևանի Մեհրալի խանի հրամանով «քաղաքի թուրքն եկավ քրիստոնի մէջն մտավ, կռիվ արին օսմանցուն հետ՝ մինչ ի Կ(60)օրն»։ Սակայն թուրքական զորամասերի կողմից քաղաքի ինքնապաշտպանության առաջին իսկ ճեղքումից հետո պատմիչն արձանագրում է. «Տաճիգըն փախավ մտավ բերդի մէջն, քրիստոնէն մնաց ի քաղաքի մէջն», «դրանից հետո մարտերը տեղի էին ունենում «օսմանցու» և «քրիստոնէի» միջև։ Տվյալ հատվածներում «թուրք» և «տաճիդ» տերմինները պատմիչի կողմից օգտագործվել են դավանանքային նշանակությամբ և նշանակում են մահմեդական։ Պատմական այս երկի խմբագրված օրինակում, կատարված Մատթեոս Եվդոկացու (1691—1772) ձեռքով, նույն հատվածը ընկալվել է հետևյալ կերպ. «Եւ սոքա էին միայն հայք, քանզի պարսիկք ընդ իշխանի քաղաքին փախուցեալ ի բերդն ամրացան եւ զհայսն թողին յանպարիսպ քաղաքի անդ մարտնչիլ»[7]։

Խանի ու շիա աղանդի մահմեդական բնակչության այս դավաճանական քայլը Երևանի ու նրա բնակչության ճակատագրի նկատմամբ նրանց ունեցած փաստական վերաբերմունքի արտահայտությունն էր։ Ավելորդ չէ հիշել, որ դեռևս 1723 թ., վախենալով ռուսական առաջխաղացումից, Երևանի մահմեդական բնակչության տիրող դասի որոշ ներկայացուցիչներ դրսևորում էին բացահայտ թրքամետ դիրքորոշում։ Պետրոս դի Սարգիս Գիլանենցի հաղորդմամբ 1723 թ. «Ցարեւանայ Բ(2)աղայ վեր ան կացել՝ Արզրըմու փաշին գրել ան՝ թէ, ինչ էք նստել, դուf էլ էf թուրf, մենf էլ։ էն որ մենք Ըռուստի ձեռն ընկանենք, ձեր ձեռնումն լինենք՝ լեվ այ. ժամանակս էս այ՝ վեր կացէք. եկէք՝ քաղաքս զաֆտեցեք և Ըռուստն թողուլ մեք՝ որ քաղաքս մտի»։ Եթե հետագա ուսումնասիրությունները ցույց տան, որ այս հատվածում «թուրք» տերմինը չունի դավանանքային իմաստ, ապա այն պետք է համարել Երևանի թյուրքալեզու բնակչության էթնիկ ինքնագիտակցության մեզ հայտնի առաջին դրսևորումը[8]։

---

4 Նույն տեղում, էջ 26։

5 Սիմեոն Երևանցի. Ջամբռ. Վաղարշապատ, 1873, էջ 293.

6 Դիւան հայոց պատմութեան. գիրք Գ, Սիմէոն կաթուղիկոսի յիշատակարանը, հրատ. Գ. Աղանեանցի. Թիֆլիս, 1894, էջ 804։ Սիմեոնի կողմից Անանիա Առաքյալի վանքին ուղղված կոնդակներում հասցեատերը նշվում է հետևյալ կերպ. «յԱռինջ գիւղ եղեալ բնական գեօղականացդ, ընդ ամենայն տեղիս գտանեցեալ բոլոր օրհնեալ բօշայիցդ, մեծաց և փոքունց, արանց և կանանց» (տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան (ՄՄ), կաթ. դիվան, թղթ. 244, վավ. 273, հմմտ. Դիւան հայոց պատմութեան, գիրք ԺԱ, Սիմէոն կաթուղիկոսի յիշատակարանը, մասն 3 (1777—1779), յաւելուածներով եւ ծանօթութիւններով հրատ. Գ. Աղանեանց. Թիֆլիս, 1913, էջ 252)։ «Բնական Առինջեցւոց և բոլոր բօշայիցդ, մեծաց և փոքունց» արտահայտությունը կրկնվում է նաև Ղուկաս Կարնեցու կոնդակներում (տե՛ս ՄՄ, կաթ. դիվան, թղթ. 243, վավ 79)։

7 Աբրահամ Երեւանցի, էջ 25, 31, 101։

8 Ժամանակագրութիւն Պետրոս դի Սարգիս Գիլանենցի.—«Կռունկ հայոց աշխարհին», Տփխիս, 1863, § 101, էջ 195։ A priori այն այդպես է դիտվել երկի ռուսերեն թարգմանչի կողմից

Գրավելով քաղաքը, թուրքական զորքերը կազմակերպված սպանդից բացի գերում են նաև «10 հազարից ավելի ընտանիք»։ Քաղաքի գրավումից մի քանի ամիս անց, բազմիցս «ման» խնդրելուց հետո, սեպտեմբերի 22-ին[10] հանձնվում է նաև բերդը, որի պարսկական կայազորը, խանը և որոշ պաշտոնեություն թուրքերի թույլտվությամբ հեռանում են Պարսկաստան։

Քաղաքում թուրքերի կազմակերպած սպանդը, գերեվարությունները և բռնի մահմեդականացումները պատճառ դարձան բնակչության թվի կտրուկ նվազման։ Հետևյալ կերպ է նկարագրում Աբրահամ Երևանցին այդ գործողությունները. «Այնչաբ յարուն թաբեց, որ Զանկու ջուրն կամրայծառեց, յարունայ հոտն ի մէջ քաղաքէն կը բուրէ, ողորմելի քրիստոնէքն բօվանդակ զսուրն քաշեցին, ոչ մնաց քրիստոնայ. անմեղ արդարներն գերի վարեցին, կոնս աղիքունքն ջրում խեղդեցավ, այսչաբ գերի գնաց ի ձեռն օսմանցու։ Գերիքն լեցվեց օսմանցու չատիրներն... Եղավ պղծութիւն, անօրէնութիւն...»[11]։

Երևանի գրավումից մեկ տարի անց թուրքերի կողմից որոշ միջոցառումներ ձեռնարկվեցին իրենց ձեռքբերումները հաշվառելու համար։ Վերջերս բուլղարական արխիվներում հայտնաբերված Երևանի բերդի 1724—1725 թթ. ելիցմտից մատյանը (դեֆթեր-ի մուկաթիաթ) գալիս է վկայելու «օսմանյան օկուպացիոն իշխանությունների՝ նվաճված երկրամասերում վարած հարկային քաղաքականության հարստահարիչ բնույթը»[12]։ Բավական է միայն նշել, որ Երևանի գանձատան վրա էր դրված Երևանի, Էրզրումի, Վանի, Թբիլիսիի, Գորիի, Լոռու և այլ բերդերի ենիչերական բերդապահ կայազորների ռոճիկների բաշխման պարտավորությունը[13]։

Համաձայն այդ մատյանի տվյալների օսմանյան իշխանությունների կողմից առաջին հարկման ժամանակ Արարատյան երկրում բաժանվել են չիզիայի (գլխահարկ) 14317, իսկ երկրորդ հարկման ժամանակ՝ 28138 թերթիկ[14]։ Բնա-

---

և տվյալ հատվածը թարգմանվել է «мы турки и вы турки» ձևով (տե՛ս Дневник осады Испагани афганами, веденный Петросом ди Саргис Гиланенц, в 1722 и 1723 годах. Материалы для истории Персии, перевод и объяснения К. Патканова. СПб., 1870, с. 38, § 101): Ավելի զգույշ են վարվել Գիլանենցի աշխատության անգլերեն թարգմանության մեջ. „You are Turks (Muslims) and so are we" (The Chronicle of Petros di Sarkis Gilanentz, concerning the Afgan Invasion of Persia in 1722, the Siege of Isfahan and the Repercussions in Northern Persia, Russia and Turkey. Translated from the ortginal Armenian, and annotated by Caro Owen Minasian, With an Introduction and additional Notes L. Lockhart, Lisbon, 1959, p. 47).

9 Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, թարգմ. ներածություն, ծանոթագրություններ Ա. Խ. Սաֆրաստյանի. հ. Ա, Երևան, 1961, էջ 143։

10 Բերդի գրավման օրը Աբրահամ Երևանցին չի նշում։ Վ. Հակոբյանը այդ բացատրում է նրանով, որ «քաղաքի բնակչության համար դիմադրությունից հետո Երևանի բերդի հանձնումը թուրքերին ոչ միայն խնդիր չէր, այլև Աբրահամ Երևանցու համար նշանակությունից զուրկ մի ակտ, որովհետև այն տեղի ունեցավ քաղաքի նվաճումից ավելի ուշ՝ մի շարք բանակցություններից հետո և կամովին» (տե՛ս Վ. Ա. Հակոբյան. ժամանակագրական մի փաստի ճշտման շուրջը.—ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ., 1974, № 5, էջ 79)։

11 Աբրահամ Երևանցի, էջ 31։ Օսմանյան զորքերի վայրագությունների մասին Գրիգոր Բաղիշեցին 1725 թ. գրում էր. «Բազում չարիս գործեցին յերկրի եւ սպանումն բազում եղեւ, եւ անթիւ գերի վարեցան՝ ի քրիստոնէից եւ այլազգեաց։ ...նե անպատմելի արեան հեղումն եղեւ» (Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ. հ. Գ (Մաշտոց-գիրք ձեռնադրութեանց), յօրինեցին հ. Բարսեղ Սարգիսեան եւ հ. Գրիգոր Սարգսեան. Վենետիկ, 1966, էջ 594)։

12 Հ. Դ. Փափազյան. Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի օսմանյան, դիվանական վավերագրերը.—«Պատմա-բանասիրական հանդես», 1984, № 3, էջ 201։

13 Նույն տեղում, էջ 200։

14 Նույն տեղում, էջ 200, 202։

Լանաբար, ջիզիայի հարկման մեջ ներգրավվել են հայ չափահաս (16-ից մինչ 60 տարեկան), համապատասխանաբար՝ 14317 և 28138 մարդ։ Ցավոք, մատյանում ջիզիայի վճարման վերաբերյալ տեղեկությունները, որոնք կարևորագույն աղբյուրներ են բնակչության էթնոդավանանքային կազմի ուսումնասիրման համար, իրարից չեն առանձնացնում բուն քաղաքը, բերդը և ողջ նահանգը և դրանով էլ զրկվում ենք քաղաքի էթնովիճակագրական պատկերը վերականգնելու հնարավորությունից։

Թուրքական այս ռազմակալմանը շուտով վերջ դրեցին Նադիրի անդրկովկասյան արշավանքները, որոնք թուրքերին դուրս մղեցին ողջ Անդրկովկասից։ Պաշարումից հետո հանձնվեց նաև Երևանի թուրքական կայազորը և 1735 թ. սեպտեմբերի 22-ից հավետ վերջ տրվեց Երևանի թուրքական գրավումներին։

Թուրքական թեկուզ կարճատև (1724—1735). բայց կործանարար. ռազմակալումը, նրանց փոխարինելու եկած պարսկական իշխողների հարկային և տնտեսական քաղաքականությունը, երկրամասում տիրող ծայրահեղ լարված վիճակը կործանիչ հետևանքներ ունեցան ինչպես ողջ Արարատյան երկրի, այնպես էլ Երևանի բնակչության աճի վրա։ Ուսումնասիրողների կարծիքով, նման կտրուկ անկումից հետո Երևանի բնակչությունը XVIII դարի երկրորդ կեսին նոր միայն հասավ 15 հազար մարդու[15]։

Այդ գործում կարևոր նշանակություն ունեցավ նաև պարսկական իշխանությունների վարած հարստահարիչ հարկային քաղաքականությունը։ Բավական է նշել, որ բնակչության հարկման նպատակով XVIII դարի երկրորդ քառորդում աշխարհագիրներ անցկացվեցին 1725, 1728, 1734[16], 1742[17], 1752[18] թթ.։ Հարկային դաժան քաղաքականությունը («եւ որպէս զԱթոռոյս մլքից խարճսն յաւելացուցին սոքա, նոյնպէս և բոլոր երկրիս մլքից յաւելացուցին») [19], 1730-ական թթ. սկսված սովը, չընդհատվող պատերազմական գործողությունները կործանիչ ազդեցություն ունեցան բնակչության բնական աճի վրա ինչպես գավառում, այնպես էլ Երևան քաղաքում։ 1743 թ. գրած իր հիշատակարանում Սիմեոն վարդապետը («յերկրէն Արարատու, ի քաղաքէն Երեւանու») ստիպված էր արձանագրել. «Ի ներ քանեաց ամացս ութն շահ փոխեցան՝ մին զմիւսն սպանանելով եւ զտեղին յաջորդելով. մտածեա թէ որքան իցէ լեալ վնասք ի հեծելազօրացն սոցա եւ երկիրն որպէս իցէ ոտնակոխ լեալ հանդերձ գերեվարութեամբ, թող զսրամաշ եւ զսովամաշ լեալսն, իսկ զփախստեայսն ո՞ թուեսցէ. գրեթէ երկիրն Պարսից եւ Այրարատեան ամայի եղեւ»[20]։

1730—40-ական թթ. Աբրահամ Կրետացի և Ղազար Ջահկեցի կաթողիկոսները գերագույն ջանքեր գործադրեցին Արարատյան երկրի հայ բնակչությանը

---

15 А. Р. Иоаннисян, П. Арутюнян. Армения.—В кн.: Очерки истории СССР. Период феодализма. Россия во второй половине XVIII в., М., 1956, с. 738.

16 Ըստ Սիմեոն Երևանցու դեռևս 1734 թ. Նադիրը «ի հայրապետութեան Տեառն Աբրահամու Թրակացւոյ, զգործակալս, այսինքն զմիրվէիդս հանէ յամենայն երկիր գրել յիւրաքանչիւր գաւառի, քաղաքի և գիւղորէից զհասսն և զհարկսն արքունական։ Յորմէ և կարգեցաւ յերկրիս Երևանու Միրզա-Քեազում անուն ոմն գլխավոր ռաճիկ վէքիլ և միրվէիզ վերոգրեալ գործոյն» (Ջամբռ, էջ 143)։

17 Վրաց պատմիչ Պապունա Օրբելիանին հիշում է, որ 1742 թ. ջա՛ը «երեք հազար թուման պակսեցրեց երկրին, վրացու հարկը զիջեց, իսկ հային... կրկին ծանրաբեռնեց, (Լ. Մելիքսեթ-Բեկ. Վրացական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. հ. Գ, Երևան, 1955, էջ 117)։

18 «Եւ ի հազար երկու հարիւր երկու թուոյն (իմա՛ 1752 և ոչ՝ 1753) մերում, և ի Ռէշկէ տաճկաց թուին, ի յիշխանութեան Ազատ խանին, և ի Հայրապետութեան Մինասայ Ակնեցւոյն, դարձեալ միրվէիզք ելանեն յերկիրս ի գրել զհասսն. և զհարկսն երկրիս, Միրզա-ռապի կոչեցեալ ոմն և այլք ընդ նմա» (Ջամբռ, էջ 148)։

19 Նույն տեղում, էջ 147։

20 Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիէննա, կազմեց Յ. Տաշեան. Վիէննա, 1895, էջ 957։ Հմմտ. նաև «Արարատ», Վաղարշապատ, 1888, էջ 158—159։

սպանություններից, գերեվարություններից զերծ պահելու համար։ Երբ Նադիրի հրամանով Խորասան պետք է քշվեր Թբիլիսիից ու Արարատյան երկրից 300-ական տուն ազգաբնակչություն, Աբրահամ Կրետացուն հաջողվում է (3000 սոմար ցորենով և 3000 թումանով) կանխել թբիլիսցիների բռնագաղթը։ Սակայն կաթողիկոսի իսկ հաղորդման համաձայն Արարատյան աշխարհից գաղթեցվող 300 տուն բնակչությանը փրկելու համար «ոչ եղև հնար»[21]։ Ուշագրավ է նաև, որ Նադիրը Մուղանի դաշտում իր թագադրության ժամանակ իր խաներին հայ գերիներ բաշխելիս բոլորին տվեց, բացի Երևանի ու Արարատյան աշխարհի ներկայացուցիչներից[22]։ Սակայն Աբրահամին ու հայ մելիքներին հաջողվում է փրկագնումով ազատել մի մեծ խումբ գերիների, որոնք ուղարկվեցին Արարատյան երկիր[23]։

Ի հաշիվ Արևմտյան Հայաստանից տեղափոխության Արարատյան աշխարհի հայ բնակչության ստվարացման համար եռանդուն գործունեություն ծավալեց Ղազար Ջահկեցի կաթողիկոսը։ Փաստաթղթերը վկայում են, որ 1740-ական թթ. սկզբին նրա ջանքերով մեծ թվով հայություն «Հռոմից ու Քրդստանից» տեղափոխվել են բնակվելու էջմիածնապատկան և Նախիջևանի շրջանի մի շարք գյուղերում (Ջահուկ և այլն)[24]։

Արևելյան Հայաստանի, այդ թվում նաև Երևանի բնակչության աշխարհագրության մեջ նոր խոշոր փոփոխություններ տեղի ունեցան 1730—40-ական թթ.՝ կապված երկրամասում ստեղծված ռազմաստրատեգիական նոր իրադրության հետ։ Թուրքական կողմում գտնվող բնակչությունը, չցանկանալով հայտնըվել սպասվող ռազմական գործողությունների շրջանում, հաճախ զանգվածորեն գաղթում էր Արևելյան Հայաստան և Երևան։ 1738 թ. փետրվարի 25-ին Իրանում ռուսական հյուպատոս Ս. Արապովը արտաքին գործերի հանձնաժողովին ուղղված իր զեկույցում հաղորդում էր. «Ис Карсу многие жители в разныя места бегут и в персицкой город Иревань»[25]. Միայն նրա տեղեկատուի («купец армянин ис турецкого города Азрюма») ուղեկցությամբ Երևան են անցել մոտ երկու հարյուր հայ ընտանիքներ[26]։ Նույն տարվա մայիսի 1-ի զեկույցում Ս. Արապովը հաղորդում է Թուրքիայից 6 հազար տուն քոչվոր «արաբների ու քրդերի» տեղաշարժի մասին, որոնց Ադրբեջանի սերասկեր Իբրահիմ փաշայի թույլտվությամբ բնակեցնում են «на степи около Иревани»[27].

---

21 Աբրահամ Կրետացի. Պատմություն, քննական բնագիր. թարգմ. առաջաբան և ծանոթագրությունները Ն. Կ. Կորղանյանի. Երևան, 1973, էջ 71։ Հմմտ. Ս. Տեր-Ավետիսյան. Նադիր Շահի արշավանքները (ըստ Հակոբ Շամախեցու). Երևան, 1940, էջ 44։

22 Նույն տեղում, էջ 123։

23 Նույն տեղում, էջ 132—134, 136 և այլն։

24 ՄՄ, կաթ. դիվան, թղթ. 1գ, վավ. 376 (պարսկ. բնագիր, 1741 թ.)։ Հակառակ երեսին Ղազար Ջահկեցու ձեռքով ավելացված է. «Շահի տված ռաղամն է՝ որ թէ ես յայլ տեղեաց ռաեաք բերել տամ՝ ի սուրբ էջմիածնի գեօղս՝ և կամ ի Ջահուկ՝ ոչ ոք չխօսի (հմմտ. նաև կաթ. դիվան, թղթ. 1գ, վավ. 379)։ Ղազար Ջահկեցու հաղորդմամբ հայ լուսավորչականների տեղափոխումը և բնակեցումը Ջահուկում փրկեց գյուղը ոչ միայն համատարած կաթոլիկացումից, այլև հետագա մահմեդականացումից. «Բայց ի դեօղաքաղաքին Ջահկայ եղեալ անթարմայքն ոչ դարձան ի կրոնս պարսից վասն ազգիս միաբնակաց որ զետեղեալք եմք ի միջի նոցա» (Ղազար Ջահկեցի. Գիրք աստուածաբանական որ կոչի Դրախտ ցանկալի. Կ.—Պոլիս, 1735, էջ 334)։

25 Армяно-русские отношения во втором тридцатилетии XVIII века, сборник документов. Т. III, Ереван, 1978, док. 77, с. 110.

26 Նույն տեղում, էջ 110—111։

27 «1738 г. мая 1.—Донесение С. Арапова в Коллегию иностранных дел о переселении курдов и арабов из Турции в Ереванское ханство» (նույն տեղում, վավ. 80, էջ 114)։ Քոչվորների իսկ հաղորդմամբ «еще идет оных в Иревань на житье ис турецкой области с пятьдесят тысяч домов». Սիմեոն Երևանցին էլ նույն ժամանակով է թվագրում

Նադիրի իշխանության վերջին խառնակ տարիներին մի քանի արշավանքներ եղան Երևանի ուղղությամբ, բայց նրանք քաղաքի բնակչության էթնիկ կազմում նոր փոփոխություններ առաջ չբերին։ Անհաջողության է մատնվում նաև Նադիրի Ամիր-Ասլան զորավարի արշավանքը Երևանի վրա 1747 թ., երբ «Երևանի ժողովուրդը Նադիր-շահի կողմից իրեն արված զանազան առաջարկներին հավանություն չի տվել և մերժել է, դուրս դալով հնազանդության սահմանից՝ ապստամբություն է բարձրացրել, իրենից սերքերդե նշանակել և ամրացնելով Երևանի բերդը, կռվի պատրաստվել»[28]։ Ըստ թուրք պատմիչ Իզզիի այս արշավանքը անհաջողության է մատնվում, քանի որ «քաջարի ժողովուրդը, Երևանի համար կյանքը զոհելու պատրաստ, սկսում է կռվել և պատերազմել»[29]։ Ավարառության նպատակով 1749 թ. Երևան են արշավում Ղարաբաղի ինքնահռչակ Փանահ-խանի հրոսակները, որոնք, ըստ ժամանակակցի հաղորդման, Երևանից և Էջմիածնից «многое число скота и есыря отогнали»[30].

Նկարագրվող դեպքերի կապակցությամբ հարկ կա քննարկելու բուն քաղաքում դավանանքային ու էթնիկ համայնքների հարաբերակցության հարցը։ Եթե քաղաքի քրիստոնյա բնակչությունը էթնիկապես միատարր չէր (հայեր, հայ բոշաներ և այլն), ապա առավել բարդ էր Երևանի մահմեդական բնակչության էթնիկ կազմը։ Բուն քաղաքում մահմեդական տարրի գոյացման աղբյուրներն էին.

ա) Երևանի շիա խաների կողմից պարբերաբար կազմակերպվող բնակչության բռնագաղթերը, որոնց հետևանքով քաղաք էր տեղափոխվում որոշ թվով մահմեդական բնակչություն, անգամ՝ սուննի աղանդի։

բ) բերդում եղած պաշտոնեության ու կայազորի անդամների աստիճանական հոսք դեպի քաղաքային տարածք[31].

քոդերի մուտքը Արարատյան երկիր. «Յաուրս Նատրշահին մանաւանդ, յորժամ սոյն քիւրտքս դալին յերկիրս յայս, կանոնաւորապէս տուրքն նոցին էր, թէ թագաւորին և թէ տեղւոյս խանին, Գշ (300) թուման, և կամ Գձկ (360) թուման» (Դիւան հայոց պատմութեան. գիրք Գ, էջ 268, հմմտ. էջ 293, 194—195, 267—269)։ Արարատյան երկրում քրդերի հիմնավորման մասին տե՛ս նաև Հ. Դ. Փափազյան. Երևանի Մուհամադ-խան ղաջարի՝ Միրզա-աղա սիպկիին և Ահմադ-աղա ղիլանիին շնորհած աղայության հրամանագրերը (XVIII դ.).—Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, 13, Քրդագիտություն. Երևան, 1985, էջ 272—283։

28 Թուրքական աղբյուրները, հ. Ա, էջ 199։

29 Նույն տեղում։ Ըստ Պապունա Օրբելիանու վկայության «Ամիր Ասլան-խանն եկել էր մեծ զորքով և Երևանում էր գտնվում, ամեն օր տեղի ուներ թնդանոթների և ռումբերի հրաձգություն, սակայն ոչ մի բանով Երևանի բերդին չվնասեցին» (Վրացական աղբյուրները Հայաստանի ու հայերի մասին. հ. Գ, էջ 122—123)։

30 Տե՛ս Армяно-русские отношения, т. III, док. 172 («21 декабря 1749 г.—Сообщение С. Киреева о событиях в Закавказье»), с. 239. Երևանցիները օգնության են դիմում զրաց Հերակլ արքայազնին, որի զորքերը, հետապնդելով ավարառուներին, սպանում են Փանահ-խանի եղբորն ու որդուն։ Փաստաթղթում թալանված գույքի ու գերիների վերադարձնելու մասին ոչինչ չի հաղորդվում։

31 Կ. Կուցիան, վկայակոչելով Սիմեոն Երևանցու «Ջամբռը» (ռուսերեն հրատ., էջ 181, 259), հավաստիացնում է, թե Երևանում և նրա արվարձանում (՞) ապրում էին ադրբեջանցիներ, թուրքեր, պարսիկ մահմեդականներ (տե՛ս კ. კუციია. აღმოსავლეთ ამიერკავასიის ქალაქები XVI—XVIII საუკუნეებში. თბ. 1976, გვ. 14)։ Սիմեոնի «Ջամբռի» վկայակոչված հատվածներից առաջինում խոսվում է մուլքերի առուծախի մասին կաթողիկոսի և «յԵրևանցի Այասլու եասաւուլ Հաբիպէկ կոչեցեալ տաճկի» միջև Երկրորդ դեպքում խոսվում է «Հաճի-իմամ-ղուլի որդի Հաճի-Մահմատ-Քեարիմէն» 3 հնձանի գնման մասին Երևանում Աստվածատուր Համաղանցու կողմից։ Երկու վկայակոչումների դեպքում էլ ուսումնասիրողի մոտ նկատելի են հետևյալ վրիպումները. 1) «Ջամբռի» համապատասխան հատվածներից, առանց լրացուցիչ փաստարկներ բերելու, անհնար է հաստատապես պնդել թե տվյալ անձինք քաղաքո՞ւմ էին ապրում, թե՞ բերդում, 2) առանց լրացուցիչ նյութերի, հենվելով միայն բերված անվանական տվյալների վրա, հնարավոր չէ անսխալ վերականգնել նրանց էթնիկ պատկանելությունը։ 1815 թ. գրված մի փաս-

գ) Երևանի խաների կողմից հովանավորվող առանձին մահմեդականների (թյուրք, պարսիկ, քուրդ և այլն) տեղաշարժ և հիմնավորում բուն քաղաքում կամ բերդում[32].

դ) էթնիկ պրոցեսները[33], *որոնց հետևանքով բուն քաղաքի քրիստոնյա բնակիչը, խզելով իր կապերը քրիստոնեական եկեղեցու հետ, ժամանակի ընթացքում անջրպետվում էր իր դավանակիցներից, դրանով հանդերձ՝ նաև լեզվակիցներից և աստիճանաբար համալրում քաղաքի մահմեդական (պարսկալեզու կամ թյուրքալեզու) բնակչության շարքերը։ Եթե մեզ հայտնի չեն քաղաքում քրիստոնյա բնակչության նահատակության դեպքեր, ապա աղբյուրներում քիչ չեն հիշատակությունները քաղաքում առանձին անհատների (հատկապես ունևոր դասից) կողմից մահմեդականություն ընդունելու վերաբերյալ։*

Այս գործում հատկապես խթանիչ դեր էր խաղում Ղզլբաշական Իրանում գործող «Իմամ Ջաֆարի օրենքը», որի համաձայն մահմեդականություն ընդունած նախկին քրիստոնյան իրավունք ուներ լրիվին ժառանգելու իր քրիստոնյա ազգակիցների ողջ ունեցվածքը, անկախ ազգակցականության աստիճանից[34]*։ Այն փաստը, որ եվրոպական աղբյուրները այս օրենքի գործունեությունը և «նոր մահմեդականների» («ջադիդ-ուլ-իսլամների») առաջացումը բացատրում են օրինակ բերելով միայն հայերին («եթե որևէ հայ մահմեդականանա...»), վկայում է, որ օրենքն ընդունվել էր հիմնականում Իրանի ամենամեծ քրիստոնեական համայնքի՝ հայերի դեմ*[35]*։ XVII դարի կաթոլիկ միսիոներ և Իրանի խոշորագույն գիտակ Ռաֆայել դյու Մանը արձանագրում էր, որ «այս մաքիավելիական հայտնագործությունը շատերին էր հրահրում սխալ քայլ կատարել իրենց ունեցվածքը փրկելու կամ այն ուրիշների ունեցվածքի վրա չավելացնելու համար»*[36]*։*

Այս ու նման տիպի այլ տնտեսական լծակների ազդեցության տակ մահմեդականություն ընդունած հայերի թիվը փոքր չէր նաև Երևանում։ Դեռ 1632 թ. հուլիսի 2-ին Երևանից գրած իր նամակում կաթոլիկ գործիչ Պ. Փիրոմալլին

տաթղթում Երևանի «Նորագիւղ ասացեալ վայրոջ» իր այգու մեկ տախտակը ա. Գեղարդին է նվիրում «Երևանայ չհարցի Մութավէլի Ալլահ͡շուքուր կոչեցեալ»-ը «վասն վաղաթառամ որդւոյն... Գալուստի» (տե՛ս Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր, պրակ 1, առաջաբանով, ծանոթագրություններով և բառարանով կազմեց Հ. Աբրահամյան. Երևան, 1941, էջ 102—103)։ Տվյալ դեպքում միայն անձնանունից դատելով հազիվ թե կարելի էր եզրակացնել, թե նվիրատուն ազգությամբ հայ է։

32 *Օրինակ, XVIII դարի կեսերին Երևան տեղափոխվեց խանության սահմաններ մուտք գործած քրդական ցեղերի վերնախավի այն հատվածը, որը ազգակցական կապեր հաստատեց Երևանի խանի հետ (տե՛ս Դիւան հայոց պատմութեան. գիրք Գ, էջ 194—195, 267—269, 293 և այլն)։*

33 *էթնիկ պրոցեսների մասին տե՛ս* Ю. В. Бромлей. Очерки теории этноса. М., 1983, с. 233—282. *Ցավոք, սովետական ազգագրագետների աշխատանքներում չի քննարկվում այդ պրոցեսների ընթացքը միջնադարում և, ըստ էության, հրապարակի վրա չկա պրոբլեմի վերաբերյալ որևէ տեսական աշխատանք։*

34 *Օրենքի պաշտոնական ձևակերպումը տե՛ս XVII դարի 20-ական թթ. Երևանի Շահ'ի կողմից տրված ֆեթվայում (Հ. Փափազյան. Սեֆյան Իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջը.—Բանբեր Մատենադարանի, № 3, 1956, էջ 89—91։ Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, 1, Հրովարտակներ. պրակ երկրորդ (1601—1650 թթ.), կազմեց Հ. Դ. Փափազյան. Երևան, 1959, վավ. 16, էջ 101—103)։ Այն համառոտ արտահայտված է հետևյալ ֆրազում. «Եթե կա մահմեդական ժառանգ, անհավատները (այսինքն՝ քրիստոնյաները— Մ. Կ.) ժառանգությունից զրկվում են»։*

35 *Տե՛ս, օրինակ, Տավերնիեի, Շարդենի, Ռաֆայել դյու Մանի, Պետրոս Պետիկի, Գ. Շինոնի, Պուլեի, Պիքեի, Սանսոնի աշխատությունները։*

36 Estat de la Perse en 1660, par le père Raphaël du Mans, supérieur de la mission des capucins d'Ispahan. Publiée avec notes et appendice par Ch. Schéfer. Paris, 1890, p. 47.

նկարագրելով «առհասարակ ընդդէմ հայութեան» ընդունված վերոհիշյալ օրենքի ավերիչ գործունեությունը, Հռոմի բարձրագույն կաթոլիկ իշխանություններից խնդրում էր միջոցներ ձեռք առնել կասեցնելու հայ ժողովրդի իսլամացումը[37]։ Երևանի «նոր մահմեդականների» շարքերում հատկապես մեծ էր ունևոր դասի անդամների թիվը։ Ըստ աղբյուրների վկայությունների XVII դարի վերջերին արդեն մահմեդականներ էին երևանցի մեծահարուստ խոջա Սեթի որդի խոջա Հակոբջանի սերունդները[38]։ Մահմեդականացող հայերը, որպես կանոն, կոչվում էին նոր՝ մահմեդական բնակչությանը բնորոշ անձնանուններով։ Օրինակ, Զաքարիա Ագուլեցու վկայությամբ, 1671 թ., երբ Նոր Ջուղայում մահմեդականացավ («քուրդացաւ») ջուղայեցի Օհան վարդապետը «անունն եդին Շխ-Մումին»[39]։ Ըստ Սիմեոն Երևանցու, երևանցի խոջա Հակոբջանի որդի Սարգիսը «տաճկացեալ է և կոչեցեալ է Սարուխան»[40]։ Բռնի թե կամովին դավանափոխ հայի վերադարձը նորից դեպի քրիստոնեություն ընդհանրապես ու գործնականում անհնար էր՝ նախադեպերը վերջանում էին դավանափոխի մահվամբ։ Սակայն աղբյուրներում հատուկենտ վկայություններ են հանդիպում նաև նման վերադարձի մասին։ XVII դարում Արևելյան Հայաստանում գրված մի տաղարանում մատնանշվում է այն միակ ճանապարհը, որը նման վերադարձի հնարավորություն էր ընձեռում. «Կամայ յակամայ թո(ր)քացօղն թէ զըղջայ, ռաղամ առնէ ի շահէն և զիւր պահէ դարձեալ»[41]։ Մուղանում Նադիրի թագադրման օրերին, նախկինում Նախիջևանի շեյխուլիսլամի ու ղազու ներկայությամբ, մահմեդականացած մի հայ աղջկա նորից քրիստոնյա օծելու համար Աբրահամ Կրետացին ստիպված է լինում ռաղամ խնդրել նորընծա շահից[42]։

Այնուամենայնիվ, նման դեպքերը եզակի ու հազվադեպ էին և երբեմն վիճակը այնքան էր ծանրանում, որ ժամանակագիրը ստիպված էր անելու հետևյալ համեմատությունը. «Ի գաւառն Երեւանայ այնքան զուլման իրաւուքիւս, որ ընդ գրով ոչ արկանի և առաւել համարձակիլ ասել քան զօսմանցւոց»[43]։

Երևանում «Իմամ Ջաֆարի օրենքի» ավերիչ գործունեության մասին է վկայում Եսայի Հասան-Ջալալյանը, որը նկարագրելով պարսկական իշխանությունների հարստահարությունները շահ Հուսեյնի իշխանության տարիներին (1694—1722), հաղորդում էր. «Նմանապէս և այլ բազմայոյլ չարիս յորդեցին. ուստերս և դստերս ուժգին քարշելով, զարս և զկանայս բռնի ուրացուցանելով, և զյետամնացելոց զինչսն և զստացուածսն և գանձս յափշտակելով և ուրացողացն տալով. որպէս և որքան դօվլաթաւորք և մեծատունս աչօք մերովք տեսաք ի Ջուղայ և յԵրևան, որ ի վերջին աղքատութիւն և թշուառութիւն հասեալ էին. և հարցեալ զպատճառն տեղեկացաք. որ վասն ուրացողացն, և յափշտակութեան ընչից իւրեանց էին եղեալք այնպէս»[44]։

Ճիշտ է, հայ կաթողիկոսների բազում բողոքների շնորհիվ շահական հրովարտակներով մի շարք անգամներ (1721, 1724, 1731, 1735, 1748, 1825 թթ.)[45]

---

37 Կ. Եպս. Ամատունի. Ոսկան վրդ. Երեւանցի եւ իր ժամանակը։ Լուսաւոր էջ մը ԺԷ դարու հայ եկեղեցական պատմութենէն. Վենետիկ, 1975, էջ 39։

38 Տե՛ս Հ. Փափազյան. Սեֆյան Իրանի..., էջ 92։ Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, 1, Հրովարտակներ, էջ 66: А. Д. Папазян. Аграрные отношения в Восточной Армении в XVI—XVII веках. Ереван, 1972, с. 162.

39 Զաքարիա Ագուլեցու օրագրությունը. Երևան, 1938, էջ 103։

40 Ջամբռ, էջ 121, 122։ Նման օրինակներ շատ կան հայկական աղբյուրներում։

41 Բարգէն աթոռակից կաթողիկոս. Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ ազգային Մատենադարանի Հայոց. Անթիլիաս, 1961, էջ 900։

42 Աբրահամ Կրետացի. Նշվ. աշխ., էջ 166—170։

43 Բարգէն կաթողիկոս. Նշվ. աշխ., էջ 900։

44 Եսայի Հասան-Ջալալյան. Պատմութիւն կամ յիշատակ ինչ ինչ անցից դիպելոց յաշխարհին Աղուանից, Շուշի, 1830, էջ 23։

45 Շահական հրովարտակների բնագրերը համապատասխանաբար տե՛ս ՄՄ, կաթ. դիվան, թղթ. 244, վավ. 255 (սրա բնագիրը չի պահպանվել), թղթ. 1գ, վավ. 330, 333, 396. թղթ. 4,

կասեցվեց այս օրենքի գործադրությունը, սակայն գործնականում այն կիրառության մեջ մնաց ընդհուպ մինչև XX դարի սկիզբը։

Չնայած էթնիկ պրոցեսները զգալիորեն խաթարում էին քաղաքի էթնիկ դիմապատկերը, այնուամենայնիվ հայերը շարունակում էին մնալ քաղաքի գերակշռող տարրը։ Այսպես, 1769 թ. հունիսի 14-ին, վրաց Հերակլ թագավորը, որին հարկատու էր Երևանը, քաղաքի մասին հաղորդում էր հետևյալը. «Город Эревань, губерния состояла пред сим армянского владения, столичной город, ныне правитель—персидцкой губернатор... народ поселен много армянского закона...»[46]. *Այս վկայությունից մոտ 15 տարի անց նույնն էր վկայում նաև Արևելքում ֆրանսիական դիվանագետ Ֆերիեր-Սովբյոֆը. «Արվարձանը (*fauxbourg*), որն ավելի մեծ է քան քաղաքը (*ville*), բնակեցված էր արհեստավորներով ու հայերով. վերջիններս (այսինքն՝ հայերը—Մ. Կ.), որոնք Երևանը դիտում էին որպես իրենց հայրենիքի մայրաքաղաքը. կազմում էին բնակչության մեծ մասը»*[47]*։*

XVIII դարի վերջին քաղաքի էթնիկ կազմում նոր փոփոխություններ տեղի չունեցան, չնայած տարածքը գտնվում էր պատերազմական գործողությունների շրջանում։ XIX դարի սկզբի աղբյուրները (Կլապրոտ, Ջոնսոն, Դյուպրե, Պորտեր և այլն) գալիս են վկայելու, որ քաղաքում շարունակում էր գերակշռող մնալ հայ էթնիկ տարրը։

ЭТНИЧЕСКИЙ СОСТАВ НАСЕЛЕНИЯ И ЭТНИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В ЕРЕВАНЕ В 1724—1800-х ГОДАХ

М. М. КАРАПЕТЯН

Резюме

В этническом составе населения города Еревана в XVIII в. не произошло крупных изменений по сравнению с XVII в. Согласно источникам XVIII в. абсолютное большинство населения города составляли армяне. Наряду с армянами с начала XVIII в. в городе фиксируется малочисленная (около 100 домов) этническая группа цыган-монофизитов (армяне-боша), которые вместе с армянами героически отстаивали Ереван в период турецкой оккупации в 1724 г. Пестрым был этнический состав мусульманского населения города. В результате этноконфессиональных процессов в городе появляется сравнительно крупная группа мусульманизированного армянского населения. Гарнизон крепости состоял в основном из тюрок, армян, персов, курдов и др.

վավ. 144։ Պարսկերեն փաստաթղթերին ծանոթանալու համար շնորհակալություն ենք հայտնում Հ. Դ. Փափազյանին։

[46] Грамоты и другие исторические документы XVIII столетия, относящиеся к Грузии. Т. I, с 1768 по 1774 год, под ред. А. А. Цагарели. СПб., 1891, док. 198, с. 434.

[47] Mémoires historiques, politiques, et géographiques des voyages du comte de Ferriéres—Sauvbeuf, faits en Turquie, en Perse et en Arabie, depuis 1782, jusqu'en 1789. T. I, Paris, p. 259.